ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի փետրվարի 11-14-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն / Լոնդոն / կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն), 2025թ. փետրվարի 11-14-ը

3.Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով և Միացյալ Թագավորության Վիճակագրության մարմին

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (ԵՎԿ) Բյուրոյի հանդիպմանը: Ս. Մնացականյանը հանդիսանում է Բյուրոյի քինգմեյքեր՝ անձ, ով մեծ ազդեցություն ունի Բյուրոյի անդամներ ընտրելու իրավասության հարցում:

5.Քննարկված թեմաները՝

Ընտրված վիճակագրական ոլորտների խորացված վերանայումներ, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի վիճակագրական աշխատանքներ և ԵՎԿ-ի մասնագետների թիմեր, Ռազմավարական զարգացումները պաշտոնական վիճակագրությունում, ԵՎԿ-ի 2025 թ. լիագումար նստաշրջանի նախապատրաստում, ԵՎԿ-ի ուղեցույցներ և առաջարկություններ 2025թ.:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԵՎԿ-ի Բյուրոյի հանդիպմանը քննարկվեցին հետևյալ հարցերը. 2030թ. կես ճանապարհին. քաղված դասեր ԿԶՆ-ի համար վիճակագրություն տրամադրելուց, Ծերացման վերաբերյալ վիճակագրություն, Մասնավոր պահվող տվյալներ. վերջնական հաշվետվություն, Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացում. Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման Բարձր մակարդակի խմբի (HLG-MOS) հաշվետվություն, Սպառողական գների ինդեքսում ապրանքների և ծառայությունների դասակարգման փոփոխություն՝ գործնական ուղեցույց,

Ռազմավարական զարգացումները պաշտոնական վիճակագրությունում՝ հետևում 2024թ. հոկտեմբերի քննարկմանը:

Բյուրոյի նիստում ելույթով հանդես եմ եկել հետևյալ թեմաների շուրջ. 2030թ. կես ճանապարհին. քաղված դասեր ԿԶՆ-ի համար վիճակագրություն տրամադրելուց, Արտագաղթի չափում, Միջազգային միգրացիայի նոր ձևերի չափում, Սպառողական գների ինդեքսում ապրանքների և ծառայությունների դասակարգման փոփոխություն, ինչպես նաև 2030 թվականի շրջափուլի մարդահամարների և կացարանների հաշվառում, քանզի Արմստատն ակտիվ մասնակցել է թեմաներին վերաբերող աշխատանքային խմբերի աշխատանքներին:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ժամանակ որոշումներ ընդունվեցին հետևյալ հարցերի վերաբերյալ. ԵՎԿ-ի 2025թ. լիագումար նիստի և 2025 ու 2026 թթ. համար խորացված վերանայման թեմաների ընտրություն, Սոցիալական համախմբվածություն (տեխնիկական առաջադրանք), Արտագաղթի չափում. աշխատանքային պլան և մանդատի երկարաձգում, Միջազգային միգրացիայի նոր ձևերի չափում. առաջընթացի հաշվետվություն և պլան 2-րդ տարվա համար, ԵՎԿ-ի 2025թ. նստաշրջանի առաջին և երկրորդ սեմինարներ, ԵՎԿ-ի 2025թ. լիագումար նստաշրջանի օրակարգի նախագիծ և ժամանակացույց, 2030թ. շրջափուլի մարդահամարի և կացարանների հաշվառումների վերաբերյալ առաջարկություններ, Վարչական աղբյուրներում դժվար հասանելի խմբեր, Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդել (GSBPM), Էթիկան ժամանակակից վիճակագրական կազմակերպություններում, Բարեկեցության չափում, Բաց աղբյուրի ծրագրային ապահովման կանոնադրություն, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի վիճակագրության ծրագրի աշխատանքային փաստաթղթեր, Հաջորդ հանդիպումների ժամկետները և վայրերը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը Բյուրոյի նիստին հնարավորություն ընձեռեց քննարկելու և ծանոթանալու վիճակագրության տարբեր ոլորտների մշակման, վարման և տարածման լավագույն փորձին, վերջին զարգացումներին, ուղեցույցներին և առաջարկություններին, պաշտոնական վիճակագրության ռազմավարական զարգացումներին, քննարկելու վիճակագրության առջև ծառացած խնդիրները, ներկայացնելու Հայաստանի փորձը, ամրապնդելու վիճակագրական ներուժն ու

մոդեռնիզացնելու պաշտոնական վիճակագրության համակարգը, ինչպես նաև կատարելու կոնֆերանսի բյուրոյի քինգմեյքերի պարտականությունները:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

17.02.25թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	**ՀՀ վիճակագրական կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	**Վարչապետի որոշում թիվ 57-Ա 23.01.2025թ**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)	**Ստեփան Մնացականյան** ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ *(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)*
4. Գործուղման վայրը	**Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն՝ Լոնդոն**
5. Գործուղման ժամկետները	**11.02.2025-14.02.2025թթ**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	**2025թ. պետական բյուջեով ՎԿ-ին հատկացված միջոցների հաշվին**
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	*(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)*
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	*(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)*

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Ստեփան Մնացականյան**	**Ընդամենը (հազ. դրամ)**
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	418756.00	418.76
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$184.33	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	73066.57	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	219200	219.20
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$142.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	56641.0	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	226564	226.56
Այլ ծախսեր	Մուտքի արտոնագրի վճար	59433	59.43
	Վիզակենտրոնի ծառայության միջնորդավճար	37594	37.59
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**961.55**	**961.55**

Գլխավոր ֆինանսիստ Ա. Հայրապետյան

18.02.2025թ